նին։ Դրանից հետո ծեր կնոջը տուն են բերում, լսում խորհուրդներն ու հաշվի առնում դիտողությունները։

Ըստ Մոկսում գրի առնված մի զրույցի[28], որը իր զուգահեռներն ունի ուրիշ ժողովուրդների բանահյուսության մեջ[29], մի ընտանիքում մեծահասակ պապին ճաշ են տալիս փայտե պնակից. նրա ձեռքերը դողում էին և կավե պնակներն անընդհատ ձեռքից ընկնում, կոտրվում էին։ Մի անգամ երեխան փայտ է տաշում և հոր հարցին, թե ինչ է անում, պատասխանում է, թե նրա համար փայտե պնակ է շինում, որ երբ ծերանա, այդ պնակով ճաշի։ Երիտասարդ հայրը, ազդված իր տղայի խոսքից, կարգադրում է պապիկին ճաշ տալ նախկին ձևով[30]։

[28] ՀԱԻԲԱ, FF III 6303։

[29] Н. П. Андреев, նշվ. աշխ., № 982։

[30] Այս սյուժեն մշակված է Լ. Տոլստոյի կողմից։

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս հիմնական դեր խաղացողը բարոյական գործոնն է. գայլիքը վախեցնում է երիտասարդ հորը և նա փոխում է իր վերաբերմունքը։ Դա վերաիմաստավորումն է այն նախնական պարզ սյուժեների, որոնց մասին խոսք եղավ սկզբում և որոնք ստացել են ժամանակակից ըմբռնումներին համապատասխան միտվածություն. եթե որդիները վատ են իրենց ծնողների նկատմամբ, ապա նրանց որդիներն էլ հետագայում նույն կերպ են վարվելու իրենց հետ։

Այսպիսով, քննարկված բանահյուսական ստեղծագործություններն իրենց ամբողջության մեջ որոշ չափով արտացոլում են մարդկային հասարակության առաջընթացի տրամաբանությունը՝ հասարակության մի մասը կազմող մեծահասակների դերի ու տեղի վերաբերյալ։

Ա. ՂԱԶԻՅԱՆ

ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԶՈՀԱՍԵՂԱՆ ԴՎԻՆԻՑ

Դվինի թանգարանում պահվում է մի ինքնատիպ հուշարձան, որ հայտնաբերվել է Դվին քաղաքի տարածքից[1]։ Դա որձաքարե քառանիստ մի զոհասեղան է՝ 55 սմ բարձրությամբ, միջին մասում նեղացող (17,5×17,5), հիմքում (25×15) և վերին մասում (25×11) լայնացող ուրվագծերով։ Զոհասեղանի բավական լավ մշակված յուրաքանչյուր կողմի մակերեսի կենտրոնում քանդակված են տարբեր պատկերներ. մի կողմում ուռուցիկ մակերեսով սկավառակ է, որի կենտրոնը փոս է ընկած, հակառակ կողմում՝ պատվանդանին կանգնած թռչուն, մյուսում՝ ցլի գլուխ, կիսալուսնաձև եղջյուրներով, իսկ չորրորդ կողմում՝ կարիճ, շոշափուկներով կլոր գունդ բռնած (նկ. 1—4)։

Դվինի զոհասեղանը իր արտաքին ձևով, մասամբ նաև չափերով, աղերսվում է հյուսիսմերձսևծովյան բնակավայրերից (Խարաքս, Խերսոնես) հայտնաբերված, հռոմեական ժամանակաշրջանին պատկանող, տեղական սարմատական կրաքարից քանդակված համանման հուշարձաններին, ինչպես նաև հռոմեական կայսրության ընդարձակ սահմաններում լայնորեն տարածված նմանաձև կոթողներին. այն միաժամանակ հիշեցնում է անտիկ ժամանակաշրջանի փոքրասիական և Արևելյան Իրանում (Քյուհ-ի Քհվադջահ) Արշակունի թագավորի կառավարչի պալատի հրո տաճարի զոհասեղանները[2]։

Սակայն քննվող հուշարձանի էությունը բացահայտվում է բարձրաքանդակ պատկերների շնորհիվ, որոնց քննարկումը հանգեցնում է մի որոշակի հետևության։

Իրանական Միհր կամ Միթրա աստվածության պաշտամունքը դեռևս մ. թ. ա. I դարում ներթափանցելով Արևմուտք[3], մասնավորապես հռոմեական կայսրության սահմանները. արագությամբ ձեռք է բերում անթիվ երկրպագուներ

[1] Այս նյութը ժամանակին մեզ տրամադրել էր Դվինի արշավախմբի ղեկավար պրոֆ. Կ. Գ. Ղաֆադարյանը։

[2] М. И. Ростовцев, Святилище фракийских богов и надписи бенефициариев в Ай-Тодоре («Известия археологической комиссии», вып. 40, 1911, էջ 1—42. նկ. 5, նկ. 6); Э. Н. Соломоник, Алтарь Немесиды из Херсонеса («Вестник древней истории», 1960, № 2, էջ 133—139, նկ. 1); Fr. Cumont, Die Mysterien des Mithra, Leipzig, 1911, էջ 128, ֆիգ. 6; L. A. Campbell, Mithraic iconography and ideology; Leiden, 1968; տախտ. XXIX, XXXI; E. Lane, Corpus monumentorum Religiones dei Menis, I, Leiden, 1971, ֆիգ. 121, 125, L. Vanden Berghe, Archeologie de l'Iran ancien, Leiden, 1959, էջ 16, տախտ. 15c։

[3] Plutarch's, Lives, London, 1959, էջ 175։

Ա. ստեղծում միթրայական մի ուրույն գաղափարախոսություն իր պատկերագրությամբ՝ հարուստ և բազմազան մանրամասներով, խորհրդանշաններով, ամենատարբեր կրոնա-գաղափարախոսական մեկնություններով։ Այդ նոր գաղափարախոսությունն ու պատկերագրությունը, հանդես գալով Հռոմեական կայսրության ընդարձակ տարածքի վրա, առաջ են բերում դրսևորման տարբեր ձևեր՝ արձաններ, բարձրաքանդակներ, դոհասեղաններ, որմնանկարներ[4] և այլն, ծիսական-խորհրդապաշտական բազմապիսի արարողություններով։

Միթրայական պատկերագրության մեջ ամենատարածվածը և սիրվածը Միթրայի՝ ցլի հետ մենամարտն ու տեսարանն է (նկ. 5), որին հիմք է ծառայել հետևյալ դիցաբանական ավանդությունը։ Արևի աստծու հետ հավատարմորեն դաշնակցած Միթրան հանդիպում է լեռնային արոտներում արածող, Յուպիտեր-Արամազդի կողմից ստեղծված նախասկզբնական կենդանի՝ ակ անլուսապ ու կատաղի ցլին։ Միթրան խորամանկ համարձակությամբ ամուր բռնում է



Նկ. 1, 2

ցլի եղջյուրներից, թռչում նստում մեջքին։ Մեծ դժվարությամբ նրան հաջողվում է կատաղած ցլին փակել քարայրում։ Սակայն վերջինս կարողանում է դուրս պրծնել այնտեղից։ Այնժամ արևի աստվածը ուղարկում է լրաբեր ագռավին Միթրայի մոտ, որպեսզի օգնի իր դաշնակից ընկերոջը՝ սպանելու փախստականին։ Միթրան կատարում է երկնքի հրամանը. նա իր ճարպիկ շան հետ հետապնդում է ցլին, որը փախել մտել էր քարանձավը. մեկ ակնթարթում Միթրան բռնում է ցլին, մի ձեռքով ռունգերից բռնած, մյուսով ցլի կողն է խրում որսորդա-

[4] M. J. Vermaseren, Corpus inscriptionum et monumentorum religionis Mithriacae. The Hague. vol. I, 1956, vol. II, 1960.

[5] Fr. Cumont, նշվ. աշխ., էջ 120—122։

կան դաշույնը։ Կատարվում է հրաշագործություն. ցլի մարմնից առաջ են գալիս բոլոր բուժիչ խոտերն ու բույսերը, ողնուղեղից ժայթքում է հասկը, որից և հացը, իսկ արյունից՝ գինին։

Այսպիսով, ցլասպան հերոսը դառնում է նոր, հարուստ և բեղմնավոր կյանքի արարիչ։

Ահա այս ատվածության է նվիրված Դվինի ղոհասեղանը, որի քանդակապատկերներն իրենց ոճով ու բովանդակությամբ համապատասխանում են միթրայական գաղափարախոսությանն ու պատկերագրությանը։ Համոզվելու համար անդրադառնանք զոհասեղանի քանդակներին։

Արև խորհրդանշող սկավառակի ճիշտ հակառակ կողմի վրա պատկերված է թռչուն՝ ամենայն հավանականությամբ ագռավ, Միթրայի հավատարիմ ուղեկիցներից մեկը, որը միթրայական պատկերագրության մեջ միշտ հանդես է գալիս արևի խորհրդանշանի հետ սերտորեն կապված (Նկ. 1, 2)։ Որոշ հուշարձանների վրա այն արևի առջևում է, որպես Նրա ճառագայթների ստվեր, հաճախ Միթրայի ծածանվող թիկնոցի, այլ դեպքերում՝ քարանձավի կամարի եզրին, երբեմն էլ՝ երկնակամարի վրա կանգնած։ Թռչնի (ագռավ, աքաղաղ) պատկերներ հանդիպում են նաև Պոետովիոյի (Պաննոնիա) առաջին միթրեումի Միթրային նվիրված զոհասեղանի քանդակներում[6]։



Նկ. 3, 4

Արևի խորհրդանշանը համարյա միշտ առկա է միթրայական հուշարձաններում՝ լուսապսակի կամ շրջանի մեջ դրված, երբեմն էլ այն մի պարզ սկավառակ է փորագիր ճառագայթներով, որոնք արևի ամենապարզ պատկերումներն են. կան, անշուշտ, շատ ավելի կատարելագործվածները[7]։

---

6 L. A. Campbell, *նշվ. աշխ., էջ 22—25, տախտ.* VII_{181}, *տախտ.* XIII_{435}, *տախտ.* XV_{650}, *տախտ.* XXIX_{1496}

7 *Նույն տեղում, էջ 135, 139, տախտ.* II_{37}, *տախտ.* V_{75}, *տախտ.* XI_{321}, *տախտ.* XII_{390}, *տախտ.* XIII_{435}

Հաջորդ պատկերը ցլի գլուխն է, որի ճիշտ հակառակ կողմի վրա քանդակված է կարիճ՝ շոշափուկներով ցլի ամորձիքը բռնած (նկ. 3, 4)։

Միթրան, ըստ առասպելի, այս երկնային ցլին է գողանում տաճարից կամ քարանձավից և վարում երկնային օվկիանոսում։ Պատահական չէ, որ ցլի եղջյուրները կիսալուսնաձև են. երկնային ցուլը, ըստ հին հավատալիքների, խոնավության աղբյուր էր՝ օժտված բեղմնավորման զորությամբ, որ հենց մարմնավորված էր լուսնի մեջ։ Լուսինը ցլի սերունդների և նրանց կենսունակության պահպանողն էր։ Որոշ հուշարձանների վրա կիսալուսինը պատկերված էր լուսնի մարդակերպ սիմվոլի գլխի վրա որպես եղջյուրներ (Lunar-taurus—լուսնացուլի մոտիվ). մի քանիսի վրա՝ լուսինը վարում է ցուլերով լծված կառքը, իսկ Ափուլումի (Դաքիա) բարձրաքանդակի վրա ցուլը պատկերված է լուսնաձև նավակի մեջ[8]։

Ցլասպան հերոսի ուղեկիցներից է կարիճը, որը հանդիպում է հատկապես Սիդոնի, Հռոմի, Իտալիայի և Միջին Եվրոպայի բարձրաքանդակներում և որմնանկարներում։ Կարիճը մեծ մասամբ պատկերված է ցլի ամորձիքը իր շոշափուկներով բռնած (նկ. 4. 5)։ Բացառություն են կազմում Սիդոնի և Թրեյսի բարձրաքանդակները, որոնք տալիս են նույն պատկերի տարբերակները։ Ուշագրավ է, որ Հռոմի և Բոնոնիայի բարձրաքանդակներում կարիճը նույնացվում է սաղարթախիտ և մրգառատ ծառի, իսկ ցլի գլուխը՝ անպտուղ ծառի հետ[9]։

Միթրայական գաղափարախոսությունը և պատկերագրությունն ուսումնասիրող Լ. Քեմբելը համամիտ չէ Ֆ. Կյումոնի այն տեսակետին, թե միթրայական կարիճը թշնամի էակ է և թունավորում է ցլի սերմը. ընդհակառակը, կարիճի կապը մրգառատ ծառի, Միթրայի, ցլի սեռական օրգանների հետ մատնանշում է նրա բարերար ազդեցությունը (հասունության, պտղաբերության). այս հավատալիքի արմատները, հավանաբար, գալիս են ավելի շուտ սեմական կամ անատոլիական ավանդույթներից, քան իրանականից։

Լ. Քեմբելը նշում է նաև, որ Զոդիակի կարիճ ամիսը մոտենում է իրանական օրացույցի Միթրա ամսին, որից սկսվում էր աշունը։ Հարավային Միջագետքում այն խորհրդանշում էր անպտուղ եղանակի վերջը և աշնանային անձրևների սկիզբը[10]։ Ըստ Քեմբելի, ցլի և կարիճի վերոհիշյալ կապը կարող է լինել ցլի կենսունակությունը մեկ այլ ձևի վերափոխման խորհրդանշան[11]։

Այսպիսով, Դվին քաղաքից հայտնաբերված զոհասեղանը անկասկած նվիրված է Միթրային և պատկանում է հռոմեական ժամանակաշրջանին։

Միհրի պաշտամունքը նշանակալից տեղ է գրավել հայ հեթանոսական կրոնում։ Ըստ մատենագրական վկայությունների Բագահառիճում Միհրին նվիրված է եղել հատուկ տաճար, որն ավերվում է Գրիգոր Լուսավորչի կողմից. գանձերը նվիրվում են աղքատներին, իսկ տաճարի վայրը՝ եկեղեցուն[12]։

Ֆ. Կյումոնի կազմած Միթրայի միստերիաների տարածման քարտեզի համաձայն Փոքր Ասիայում միթրայիզմի առավել մասսայականությամբ աչքի է ընկնում հատկապես Կապադովկիան, որ կից էր Հայաստանի արևմտյան սահմաններին։ Իսկ Հայաստանի տարածքում, ըստ այդ քարտեզի, նշված է Բագահառիճը, որտեղ, Կյումոնի կարծիքով, անկասկած կարող են հայտնաբերվել միթրայական հուշարձաններ[13]։ Ինչպես հայտնի է, նորագույն հետազոտողներից շատերը հակված են կարծելու, որ Հայաստանում Տրդատ I-ի կառուցած Գառնիի հեթանոսական տաճարը ևս նվիրված է եղել Միթրա-Միհրին[14]։

Ուշագրավ է, որ Դվինի պեղումներից հայտնաբերված մ. թ. I դարին պատկանող ծածկի

---

8 Նույն տեղում, էջ 136, 139, տախտ. XI_{902}, տախտ. XVII_{693}, տախտ. XX_{1120}, տախտ. XXV_{1283}, տախտ. XXVI_{1292}, տախտ. XXXIII_{1727}։

9 Նույն տեղում, էջ 25—26, տախտ. V_{75}, տախտ. XI_{321}, տախտ. XII_{390}, տախտ. XIII_{435}, տախտ. XV_{660}, տախտ. XXXIII_{1727}։

10 Նույն տեղում, էջ 26—28։

11 Նույն տեղում, էջ 15—22։ Լ. Քեմբելը, ի տարբերություն Ֆ. Կյումոնի, օձը նույնպես համարում է Միթրայի ուղեկից՝ գործակից և օգնական։ Նա գտնում է, որ միթրայական օձի գաղափարախոսությունը չի ծագում իրանական զրադաշտական կրոնից, որտեղ օձը Ահրիմանի կերպարանափոխումն է, և նշում է օձի բարերար դերը հունական կրոնում։ Օձը, ուտելով ցլի միսը և խմելով նրա արյունը կամ սերմը, հավանաբար ապահովում էր μετεμψυχωσις-ը (հոգիների վերաբնակեցումը)։

12 «Ագաթանգեղայ Պատմություն Հայոց», աշխ. Գ. Տէր-Մկրտչեան ու Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, § 790, էջ 411—412։

13 Տե՛ս Fr. Cumont, նշվ. աշխ. քարտեզը։

14 К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953 էջ 77—95։ Ա. Ա. Սահինյան, Գառնիի Լ. Գեղարդի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1969, էջ 18։

որձաքարե սալիկը իր նյութով, ձևով և քանդակագործական մշակումով բազմաթիվ զուգահեռներ ունի Գառնիի տաճարը ծածկող սալերի հետ[15]։ Ավելին, Դվինից հայտնաբերված ծածկի որձաքարե սալի և զոհասեղանի որձաքարի պետրոգրաֆիական և քիմիական անալիզները

Նկ. 5

պարզեցին, որ երկուսն էլ միևնույն բաղադրությունն ունեն. երկուսի հումքն էլ վերցված է նույն հանքավայրից, այն է՝ Գառնի գետի հովտով Գառնի գյուղից մինչև Ջաննաթլու գյուղի ավերակները ձգվող անդեզիտա-բազալտային շերտից. այդ վայրում պահպանվել են միջնադարյան քարհանքերի հետքեր[16]։ Բացի այդ, ըստ ստույգ աղբյուրների, Դվինի ծածկի սալը, զոհասեղանը, ինչպես նաև Գառնիի հեթանոսական տաճարի ծածկի սալերն առանց երկրաչափության պատկանում են հռոմեական ժամանակաշրջանին։ Այսպիսով, համաձայն եղած տվյալների, կասկածից վեր է սրանց կերտման ժամանակաշրջանի եթե ոչ նույնությունը, ապա զոնե մերձավորությունը։

Հայտնի է, որ Հռոմ ժամանած Տրդատ I-ը Ներոնին է դիմում Միթրա տիտղոսով. մի հանգամանք, որ եթե մի կողմից վկայում է Տրդատի համար Միհր-Միթրայի լույսի ու մեծության աստվածություն լինելը, ապա, մյուս կողմից հավաստում է, որ Ներոնի համար ևս Միթրան սրբազան մեծ հեղինակություն պետք է լիներ, որպեսզի Տրդատի արտաբերած աստվածային տիտղոսը շոյեր կայսեր բմահաճ ինքնասիրությունը[17]։

Լատինական աշխարհում Փոքր Ասիայից ներթափանցած Միհրական կրոնը մ. թ. I դարում արդեն բավական լայն տարածում էր գտել[18]։ Հետևաբար, Հռոմում աստիճանաբար մոդայիկ դարձող Միթրա-Միհրի պաշտամունքը, որ Փոքր Ասիայում ու Հայաստանում արդեն վաղուց ի վեր ընտանի էր, պատճառ դարձավ, որ Ներոնից թագադրված Տրդատ I-ը,

---

15 Հ. Դ. Քոչարյան, Ծածկի քարե սալ Դվինից, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, N 11, էջ 102—105։

16 Այս արժեքավոր ուսումնասիրությունները կատարել են երկրաբանական գիտությունների թեկնածուներ Ա. Ա. Ջաֆարովը և Կ. Ի. Կարապետյանը։

17 К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 62—63։

18 Fr. Cumont, նշվ. աշխ., էջ 31—34։

նույն Ներոնից «նվեր» ստացած 50 միլիոն դինարի ու Հռոմից բերած շինարար վարպետների օգնությամբ Հայաստանում ծավալած շինարարական լայն գործունեության մեջ պատշաճ տեղ հատկացներ նաև պաշտամունքային կառույցների, և առաջին հերթին իր ամենանվիրական աստծու տաճարների շինարարությանը։ Իսկ այդպիսին, ինչպես ցույց է տալիս Գառնիի հունարեն արձանագրության մեջ Տրդատին տրվող «Հելիոս» (արեգակնային) տիտղոսը (Ἥλιος Τιριδατης), որ Միհր-Միթրայի աստվածային տիտղոսն էր, կարող էր լինել միայն Միթրան։ Եվ միանգամայն բնական է, որ Տրդատ I-ի կառուցած (?) Գառնիի տաճարը նվիրված լիներ Միթրային։

Բացի այդ, հավանական է, որ հռոմեացի վարպետների օգնությամբ նույն հռոմեացիներից ավերված Արտաշատ մայրաքաղաքը վերականգնող ու Գառնին շենացնող[19] Տրդատ I-ը շինարարական վերականգնման աշխատանքներ կատարած լինի Արտաշատի և Գառնիի միջև ընկած հնագույն բնակավայր Դվինում, որն ըստ որոշ հետազոտողների կարծիքի[20], մ. թ. 59 թ. հռոմեացիների կողմից ավերման նույն բախտին էր արժանացել, ինչ Արտաշատը։ Կարելի է ենթադրել, որ Տրդատ I-ի կողմից աչքաթող չի արվել արքայական երկու նստավայրերը (Արտաշատն ու Գառնին) միմյանց հանգուցող Դվինը։ Հնարավոր է, որ այստեղ ևս Տրդատը կառուցած լինի մինչև այժմ մեզ անհայտ մի սրբավայր, որտեղ քանդակվել և դրվել է խնդրո առարկա զոհասեղանը։ Ս. Տ. Երեմյանը գրում է. «Անուղղակի տվյալները ցույց են տալիս (Իսիդոր Խարաքսացի, Աշխարհացույց, Ի. Մարկվարտ, Վ. Մինորսկի), որ Տրդատ Ա-ը, հետևելով իր տոհմի նախորդների ավանդույթներին, իր գահակալությունը սրբագործելու համար, մայրաքաղաք Արտաշատի հյուսիսային արվարձաններում, հիմնում է սրբավայր, որը պիտի կոչվեր «Դուին-Ասաակ». չի բացառվում, որ քննվող զոհասեղանը առնչվեր հենց այս սրբավայրի հետ[21]։

Հռոմեական համանման կոթողների ոճով քանդակված միթրայական զոհասեղանի առկայությունը Դվինում, վերոհիշյալ հավանական ենթադրությունից զատ, հիմք է տալիս նաև նույնքան հնարավոր մեկ այլ վարկածի։

Տրայանոս կայսեր օրոք (98—117) մ. թ. 114 թ. Հայաստանը հռչակվում է հռոմեական նահանգ։ Կայսրը հաղթական երթով հասնում է Արտաշատ և, Դիոնի վկայությամբ, նվաճված Հայաստանում տեղակայում պահապան զորքեր[22]։ 1967 թ. Փոքր Վեղի գյուղում հայտնաբերված լատիներեն արձանագրություններից պարզվում է, որ Արտաշատում հիշյալ ժամանակաշրջանում տեղակայված են եղել 4-րդ սկյութական և իտալիկների լեգեոնները։ Այդ արձանագրություններն ուսումնասիրող Ռ. Ն. Առաքելյանի կարծիքով «նորահայտ արձանագրությունը կասկած չի թողնում, որ Տրայանոսը գրավել էր Հայաստանի մեծագույն մասը, նաև նրա մայրաքաղաք Արտաշատը և Արարատյան դաշտը...»[23]։

Հայտնի է, որ գրավված երկրի ներսում, անգամ երկրորդական ճանապարհների անվտանգության, ինչպես նաև ընդհանուր խաղաղության պահպանության նպատակով, ճանապարհների հանգուցակետերում, տվյալ լեգեոնի կայանի սահմանի վրա, երբեմն էլ դրանից դուրս ստեղծվում էին զինվորական հատուկ պահակակետեր (stationes), ուր և հիմնվում էին փոքր սրբավայրեր և տաճարներ քննվող տիպի զոհասեղաններով (գոյություն են ունեցել նաև շարժական զոհասեղաններ, որոնք կապված չեն եղել որևէ մի ճարտարապետական կառույցի հետ), զինվորների կրոնա-պաշտամունքային պահանջները բավարարելու համար[24]։ Այս երևույթը խիստ բնորոշ է եղել հռոմեական կայսրության գրեթե բոլոր նահանգներին։ Ըստ Ֆրանց Կյումոնի, Միթրայի պաշտամունքը հռոմեական լեգեոններում տարածված էր գլխավորապես զինվորական ճամբարներում։ Արևելյան աստվածություններից հռոմեական բանակում ամենասիրվածը եղել է Միթրան։ Միթրայի պաշտամունքի տարածման գլխավոր գործոնը, նույն ուսումնասիրողի կարծիքով, եղել է զորքը։ Նա անգամ միթրայական կրոնն անվանում է «զինվորների կրոն»[25]։ Եվ այդ այն պատճառով, որ Միթրան փրկիչ էր,

---

19 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Երևան, 1971, էջ 761—762։

20 Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, էջ 10։

21 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 761։

22 Տե՛ս նույն տեղում, էջ 772—773։

23 Ռ. Ն. Առաքելյան, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 309)։

24 П. М. Ростовцев, նշվ. աշխ., էջ 6—9։ А. П. Щеглов, Фракийские посвятительные рельефы из Херсонеса Таврического («Материалы и исследования по археологии СССР», № 150, М.—Л., 1969, էջ 155—156)։

25 Fr. Cumont, նշվ. աշխ., էջ 36։

աղատարար մարտիկ, մահկանացուների ուղեկից, աջակից և օգնական, միշտ չարի դեմ պայքարող, ճշմարտության և արդարության հովանավորող և պաշտպան։

Դվինը, լինելով հռոմեացիների գրված Արարատյան դաշտի ամենարարձր կետը, անկասկած արժանացել է հատուկ ուշադրության։ Հավանարար հռոմեական լեգեոններից մեկի պահակակետը եղել է Դվինում իր սրբավայրով, ուր և դրվել է Միթրային նվիրված զոհասեղանը։

Թե այս երկու ենթադրություններից որն է առավել ճշմարիտն ու իրականը, տվյալ դեպքում կարևոր չէ։ Կարևորն այն է, որ առաջին անգամ Հայաստանի տարածքում, այն էլ հին և միջնադարյան մայրաքաղաքների մերձակայքում հայտնաբերվել է Միթրայական բնորոշ հուշարձան, հռոմեական ժամանակաշրջանի նույնատիպ կոթողներին հատուկ գծերով, որ տանում է մ. թ. I—II դդ.։ Եթե Հայաստանը մինչև այժմ սոսկ մատենագրական վկայություններով, ժողովրդական բանավոր ավանդություններով, տեղանուններով ու անձնանուններով, հնամենի սովորույթների վերապրուկներով էր մտնում միհրապաշտական երկրների արեալի մեջ[26], ապա այժմ, Դվինից հայտնաբերված զոհասեղանի շնորհիվ այդ կարծիքն ամրապնդվում է նյութական մշակույթի անառարկելի տվյալով։

Պարզվում է, որ բացի Բագահառիճից, Միթրայական սրբատեղի է գոյություն ունեցել նաև Դվինում։

Մյուս կողմից, հռոմեական ժամանակաշրջանի ոճով ու արվեստով կերտված Միթրայի զոհասեղանի առկայությունը Հայաստանի մայրաքաղաքների մերձակայքում, նոր ուղիներ է բացում հայ-հռոմեական կուլտուր-պատմական առնչությունների հետազոտման բնագավառում։

Գ. ՔՈՉԱՐՅԱՆ

---

26 Թադ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 13—79։